# 154 Պիտի շարունակենք տոկալ

(Մատթեոս 24:13)

1. Մեզ Հիսուսն ասաց,
   Որ համբերենք նրա նման։
   Նա ցավին տոկաց
   Հանուն գալիք ուրախության։
   Հոր կամքը... նոր կյանքը...
   Վառ հույսն օգնեց նրան։

**(ԿՐԿՆԵՐԳ)**

Պիտի պահենք հավատը,
  Տոկանք, Աստծուն կառչենք։
Մեր Հայրը սիրառատ է,
  Կօգնի, որ մինչև վերջ տոկանք, հաղթենք։

2. Ինչ էլ որ կրենք,
   Ինչքան էլ տառապենք ու լանք,
   Մենք պիտի նայենք
   Ապագային, որ դիմանանք։
   Ի՜նչ կյանք է... բերկրա՜նք է...
   Տոկանք, որ այն ստանանք։
   **(Կրկներգ)**

3. Մենք չենք հանձնվի,
   Այլ կվանենք կասկած ու վախ։
   Հավատարմորեն
   Ծառայելով՝ մնանք ուրախ։
   Տոկում ենք, սպասում ենք.
   Գալիս է օրնահա...
   **(Կրկներգ)**

(Տես նաև Գործ. 20:19, 20; Հակ. 1:12; 1 Պետ. 4:12–14)։

*snylpnw*-REA No. 154 4/16
© 2016 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania